

րազմին» . բայց այժմ գոյութիւն չունի այն պատերազմի պատմութիւնը յեղանակիս սկիզբը, որ կը սկսի .

«Արդ ի ԶԺ . ամի տէրութեան նորին (իմացի՛ր՝ Յագիերտի Բ. 439—457) թաղաւորի, դարձեալ անդրէն խաղայր գնայր յաշխարհն Գուշանաց . . . » : Եւ կ'աւարտի այսպէս . «Եւ մեք եւ նոքա հասարակ ժառանգեսցուք զքաղաքամայրն բարեաց . . . » :

Առիթ եղաւ յիշելու, թէ Եղիշէ Պատմութեան մէջ Յագիերտ Բ. ի անունը յիշատակուած է անգամ մը էջ 7 եւ երկիցս էջ 153 : Այս տեղ, ուր նոր յեղանակ մը կը կցուի Պատմութեան, կը սպասուէր, որ հեղինակը նախարանով մը բացատրութիւն տար այս Յաւելուածին մասին, զնէր գայն նախորդ յեղանակին հետ կապակցութեան մէջ . մանաւանդ անոր համար, որ Պատմութեան նախարանին կամ Ընծայականին մէջ այս Ը . յեղանակի նկատմամբ որ եւ է խօսք չէր ըրած :

Գրուածքիս սկզբնաւորութիւնը ցոյց կուտայ որ այն ուրոյն գրութեան մը շարունակութիւնն է . այսինքն «նորին (Հայոց կամ Վարդանանց) պատերազմին» Պատմութեան : Այդ է 451 տարւոյն Կարմիր Վարդան Մամիկոնեանի մղած պատերազմն, որ տեղի ունեցած էր Աւարայրի դաշտին վրայ, ինչպէս կը պատմէ Ղազար Փարպեցի : Այս պատերազմի պատմութիւնը պէտք է գրած ըլլայ նաեւ Եղիշէ, իր ինքնայատուկ ոճով . եւ այդ Պատմութեան վերջին գրուագն է, զոր կը ներկայացնէ յեղանակս :

Ա. մասի պակասը ինքնին իմանալի է : Եղիշէի իմբազդերը «Վարդանանց պատերազմի պատմութիւնը» անձամբ խմբագրած էր նախորդ Ա. — Է . յեղանակներուն մէջ . երկու Վարդանանց պատմութիւնները մէկի վերածելով օգնութեամբ Ղ . Փարպեցու պատմութեան : Այդ առաջին եւ երկրորդ Վարդանանք են 450/51 եւ 570/78 տարիներուն կրօնի ազատութեան համար մղուած պատերազմները : Երկրորդը նսեմացուցած է, առաջինը անոր տարրերով պայծառացուցած :

Տեղիքս, ուր կ'ըսուի . «Նովաւ եւ դաշտն Աւարայրի պայծառացեալ ծաղկալից լինի, ոչ յանձրեալքեր ամպոց, այլ ի սուրբ եւ յարեւարուի վկայից ցանեալ եւ ցրուեալ սպիտակութիւնք սուրբ ոսկերացն» (147) յայտնապէս կը վկայէ, թէ Յեղանակիս երգիչը կանխաւ երգած էր նաեւ Աւարայրի կռիւը :

Եղիշէի իմբազդերը որ Խաղամախեաց դաշտի պատերազմը Արտազ փոխադրած էր, եւ ոչ իսկ Աւարայր գիւղը յիշած էր յանուանէ :

Իմ ուսումնասիրութեանս մէջ խմբագրի յաւելուածներ անուանած եմ այն հատուածները, որոնք Երկրորդ Վարդանանց Պատմութեան չէին պատշաճեր : Այդպիսի յաւելուածներ պէտք է նկատել Եղիշէի Պատմութեան 26, տ. 12—27, տ. 12, 28, տ. 25—29, տ. 28, 38, տ. 6—43, տ. 28, 78—81 (խառն), 81, տ. 39—88, 103—109, չհաշուելով այլ մանուկը, որոնք փոխառութիւններ են մասամբ Ա. եւ մասամբ Բ. մասէն . այսինքն Կարմիր Վարդանի պատերազմին նախորեակին եւ պատերազմի դաշտին վրայ խօսուած ճառերուն եւ Վասակի դատաւարութեան եւ դատապարտութեան հայոյ հատուածներ :

Դժբախտաբար Ա. մասը իր ամբողջութեան մէջ տակաւին չէ յայտնուած որ եւ է ձեռագրի մէջ . բայց կարելի է ամբողջ նկատել Բ. մասը, ներս առնելով անկէ փոխառութիւնները խմբագրուած Եղիշէի մէջ :

Եղիշէ աչքի առաջ ունեցած է Ղազար Փարպեցու Պատմութիւնը, որուն կը հետեւի : Բ. մասին մէջ զարգացուցած է ճարտարօրէն Փարպեցու հաղորդած տեղեկութիւնները նոր պատկերներով, հարցաքննութիւններով, եւ ջատագովական պատասխաններով, իրեն նմանութեան օրինակ առած չին Վկայարանութիւնները : Թէպէտ Փարպեցին է իրեն աղբիւրը, բայց թոյլ տուած է իրեն անգամ մ'ըսելու, թէ Ս . Քահանայից նահատակութեան մասին Խոսիկը «երկրորդեաց Մեզ գամենայն կարգաւ եւ զիւրաքանչիւր անձանց սրբոցն զպատասխանիսն» (142) : Եթէ այս «մեզ» չհամարինք պարզապէս ճարտասանական արտայայտութիւն, պիտի ստիպուինք հաւատարմութիւն Ս . Քահանայք ի բերան ուսած էին Փիլոնէն տեղիքներ, իրենց պատասխանատուութեան ժամանակ բառ առ բառ յառաջ բերելու համար անկէ տեղիքներ (էջ 134 եւն) :

Իր ստեղծագործութիւնն է Մոզպետի գարձը (էջ 112—128) . որուն կ'անդրադանայ սպա Եղիշէ իր Պատմութեան մէջ (23, տե՛ս § 40, 6 եւ § 41) : Այս տեղ, էջ 26, աչքի կը զարնէ նմանութիւն մ'ալ Սահակ եպիսկոպոսի պատասխանատուութեան հետ (տե՛ս § 40, 1) : Այս առթիւ գրած էի տո-

ղերս . «Այս Վկայարանութեան հեղինակն է Եղիշէ, որ գրած է զայն իբրեւ ինքնակաց գործ մը 575էն ետքը» (Մասն Բ. , էջ 630) : Այնու որ Եղիշէ Մոզպետի նահատակութիւնը դիտէ, պիտի հետեւցնենք թէ ան նախ Ա. Վարդանանց Պատմութիւնը գրած է եւ ապա Բ. Վարդանանց . ուստի «575էն ետքը» պէտք է իմանալ է . դարու երկրորդ քառորդը : Եղիշէի ստեղծագործութիւնն է նաեւ Բէլ հոնի դերը (էջ 110—111), որ կը բանայ Ս . Քահանայից նահատակութեան առաջին արարուածը :

Ս . Քահանայից նահատակութիւնն եւ Խորէնի եւ Արբահամի խոստովանութիւնն պատմելէ ետքը (էջ 142—149) կ'անցնի հեղինակը կալանաւոր Նախարաներու խոստովանողական ընթացքն եւ աղատութիւնը նկարագրել (էջ 150—155) : Ծարունակութեան մէջ կը խօսի «Երանելի առաքինեաց եւ կապելոց եւ անկելոց» տիկիներու մասին եւ կը դրուատէ անոնց համբերութիւնն եւ ժուժկալութիւնը (էջ 155—158 . հմմտ . Փարպ . 109—110) :

Ուշագրաւ է այստեղ ընդարձակ հատուած մը, որ կը պատմէ Աղուանից (Վաչէ) արքային ապստամբութեան մասին (էջ 153, տ. 20—155, տ. 6) որ տեւեց 457—460 : Թագաւորին անունը լուծած է : Ամբողջ այս հատուածը գրեթէ բառ առ բառ կը գտնենք Մովսէս Դասխուրանցու («Կաղանկատուացւոյ») քով (Ա. 10, էջ 12—14) հանդերձ թաւաւորին անունով : Այս հատուածին կցուած է Եղիշէի կողմէ գիտողութիւնս . «Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի» (155) : Ինձ կը թուի, թէ Եղիշէ իր խոստովանութիւնը կը ինքնուրոյն գրուածքի մը մէջ : Այդ գրութիւնն կը ներկայացնեն այն երկու յանուն Գիւտ կաթողիկոսի թուղթերը, որոնք գրուած են Աղուանից Վաչէ թագաւորին, յառաջ բերուած Մովսէս Դասխուրանցիէն (Ա. 11, էջ 14—22) այսպիսի վերնագիրներով .

(Ա. ) Թուղթ Գիւտայ եպիսկոպոսի առ սուրբն Վաչէ լի երկնաւոր շնորհօք : — Ի ճառս սուրբ սիրոյ քո առաքինութեան ի կամաց անձին իմոյ բղխեցին միտք իմ . . . (էջ 14—21 . տպ . էմին) :

Բ. Թուղթ Գիւտայ առ նոյն արքայ : — Վկայ Գրիստոսի, չարչարակից խաչին . . . , էջ 21—22 :

Ոճն եւ լեզուն Եղիշէինն են, կան նոյնանման արտայայտութիւններ<sup>1</sup> :

Հ . Ն . ԱԿԻՆԵԱՆ

**ԵՓՐԵՏԻ ՍԵՉՄԵՆԻԳԼՈՒԹԵԼ ՊՈՄՓԷՈՍԻ ԺԵՄԵՆԵԿԷՆ ՄԻՆՉԵՒ ԸՐԸՐԸՅԻՈՑ ԸՅԹԸՐՀԵՎԸԼՈՒԹԻՒՆԸ**

(Շարունակութիւն) :

Բ . Գ . դարէն ետքը . — Ճիշդ խօսելով Դիոկղետիանոս ուղած է կասեցնել այս շարժումը, եւ որոշ չափով մը յաջողած է<sup>101</sup> : Կարգի եւ կարգապահութեան մարդ ըլլալով՝ կը սիրէր իւրաքանչիւրն իւր աստիճանին եւ ամէն բան իւր տեղը պահել : Պետութեան միութիւնը վերահաստատելէն ետքը, որոշեց անկարելի ընել ապագային համար հեռաւոր գաւառներու անջատականութիւնը, որուն նպատակը էր զօրագուններու քայքայման դրութիւնը պատերազմի մ'աւարտելէն ետքը : Իւր ջանքերն ուղղուելու էին զլիաւորաբար Գաղղիոյ եւ Արեւելքի վրայ : Մեր աղբիւրները մանրապատում չեն ընծայեցնեն իւր գործը . միայն դիտենք որ զօրագունները թիւը քառապատկէն աւելի աճեցուցած է եւ մանաւանդ խնամ տարած սահմանազլիսոյ ամբոցներուն ու պահակազօրաց<sup>102</sup> : Լեզէոններն արդէն նուազաքանակ զինուորաց թիւ մ'ունէին . զասի փոխարինելու համար՝ բազմացուց լեզէոններու թիւը, եւ նորակազմ լեզէոնները միայն 1000 հոգւոյ զինուորաց թիւ մ'ունէին : Անտարա-

<sup>1</sup> Վերագոյն § 51, ծան . 10 ուշադիր ըրած էի թէ Եղիշէ «մինչեւ ի կողմանս Գաղերովի» տեղիքը (էջ 55) փոխ առած է Հիպոպոլիտոսի ժամանակագրութեանն : Նոյնը կրկնուած է Ա . թղթին մէջ . «Ե՛հասուր առաքինութեան քո յարեւելից միջին ի Գաղերովի (տպ . Դաղարովի) , ի հարաւոյ մինչեւ ի հիւսիս» (էջ 20) :

<sup>101</sup> Հմմտ . Մոմմսէն, անդ, էջ 240 եւն .  
<sup>102</sup> Լակտանտիոս, Յաղագս մահու հալածչաց, 7 . Սուիգաս՝ թօչաւի . : ὁ Διοκλιτιανὸς λόγον ποιούμενος ἰδὼν πρῶτα μὲν ὄψθη δεινὴν καὶ δυνάμεσιν ἀποκόσασαι ἐκείστων ἐσχατὰν ὄχνησάντων καὶ φοροῦσιν ποιεῖσιν (Դիոկղետիանոս խօսելով զործոց մասին կը կարծէր թէ պէտք է բաւականաչափ զօրութեամբք իւրաքանչիւր սահմանագրուի ամբարները եւ կարծէր թէ պէտք է զիւրութիւնը ջանալով առնուած ըլլալու է, որովհետեւ լիովին կը համաձայնի անոր հետ՝ զոր վերջինս կասեցնողիանոսի մասին կ'ըսէ հակառակ իմաստով (Բ, 34) :

կոյս ինքն էր որ ստեղծեց եւ Հայաստանի մէջ հաստատեց Ե Սկիւքականը, որ սակայն կարճակեաց եղաւ, որովհետեւ «Տեղեկութիւնք աստիճանաց» զասիկայ ալ չի ճանչնար: Ինքը կազմակերպեց նաեւ Ա Պոնտականը (I Pontica) որ Տրապիզոն կը բանակէր եւ որուն մէջ վերակացուն իւր թագաւորութեան ժամանակի արձանագրութեան մը մէջ կ'երեւայ<sup>103</sup>, եւ Արարիոյ Դ Արէսեանը (IV Martia), չխօսելով նաեւ բազմաթիւ ուրիշներուն մասին՝ որոնց անունները (ինչպէս՝ Դ Պարթեական) կը ցուցնեն թէ սահմանաց պահպանութեամբ զբաղած էր<sup>104</sup>:

Ասկէ ետքը լեզէոններու կայանաւորմանց մասին տեղեկութիւն ունինք միայն Ե. զարու սկզբան համար՝ «Տեղեկութիւնք Աստիճանաց» (Notitia Dignitatum) զբքով, որուն վերջնական խմբագրութիւնը Մոմսէն որոշած է իբր 425ին Յ. Ք.<sup>105</sup>: Ասի ամենամեծ յատակութեամբ կը պարզէ այն կենդրոնախոյս շարժումը՝ զոր արդէն մատնանիշ ըրի: Լեզէոններու ամէնէն արտակենդրոնը՝ Գ Կիրենականը<sup>106</sup>, կը կենայ իւր տեղը Բոստրայի մէջ, բայց այս նահանգը՝ որ բաւական մասամբ զբեթէ անապատային էր, յաւելուածոյ զորագունդ մը կ'ընդունի, Դ Արէսեան (IV Martia) որուն զօրանիսան էր Բէթհորոյ<sup>107</sup>:

Միջագետք ալ նման դիտողութիւններ կը պահանջէ: Յառաջ միայն երկու պարթեական լեզէոններ ունէր (Ա եւ Գ): Արդ Ա Պարթեականը<sup>108</sup> Կոստանդիա կ'երթայ<sup>109</sup>

եւ Գ Պարթեականը՝ վերը բացատրուած ենթագրութեան համեմատ՝ յԱպտոնա, Ամզայ շատ մօտ: Բ Պարթեականը կու գայ Իտալիայէն եւ կը հաստատուի ի Կեփա<sup>110</sup>, զբեթէ Տիզբիսի ափին վրայ. Դ Պարթեական մ'ալ կը հիմնուի՝ Կիրկեսիումը<sup>111</sup> զբաւելու համար, Պետութեան ճիշդ սահմանին վրայ. կար նաեւ Ե Պարթեական մը՝ որ զետեղուած էր (անտարակոյս Դիոկղետիանոսէ) Ամզայ մէջ, եւ հոն էր Կոստասայ եւ Յուլիանու ատեն<sup>112</sup>, եւ հոն ոչնչացաւ<sup>113</sup> ու տեղը չըրացուեցաւ:

Ասորիքի մէջ՝ Գ Դապիականը կը գտնուի ի Դանաւա, Դամասկոսի եւ Պարմիւրայի մէջտեղը, զէպ ի ներքսակողմն յառաջախաղացութեան մը հետեւութեամբ<sup>114</sup>, զոր չենք կրնար կշռել՝ բայց որ ստոյգ է: Դ Սկիւքականը, որ հիւսիսակողման անուրոշ տեղ մը կը բանակէր, Որեսա կ'երթայ<sup>115</sup>, որ Պարմիւրայի մօտն էր. Պարմիւրայի մէջն ալ ետքը Դիոկղետիանոս եւ իւր ընկերակիցք «յաջողութեամբ շինեցին զղեակներ» (castra feliciter condiderunt<sup>116</sup>) անոնց մէջ զետեղելու համար Ա Լիւրիկեցւոց (I Illyricarum) լեզէոնը<sup>117</sup>: Միայն ԺԶ Փղաւեանը շատ քիչ կը փոխէ իւր դիրքերը. Շամշատէն տեղափոխուած է Սուրա<sup>118</sup>:

Պաղեստինի Ժ Փրիսականը, որ յառաջ Երուսաղէմ էր, մեկուսացած է յԱլլա<sup>119</sup>, այն ծովածոցին մէջ, զոր կը կազմէ Կարմիր ծովը Սինայի արեւելակողմը<sup>120</sup>:

<sup>110</sup> Անդ, XXXVI, 30. Վերադարձը տեղի ունեցաւ Կոստանդիանոսի ժամանակ (De Rossi, ի Bull. dell' Istit., 1884, p. 84):  
<sup>111</sup> Անդ, XXXV, 24:  
<sup>112</sup> Ամ. Մարկեղ. ԺԸ, 9, 3:  
<sup>113</sup> Անդ, ԺԺ, 8:  
<sup>114</sup> Dign. XXXII, 31:  
<sup>115</sup> Անդ, XXXIII, 23:  
<sup>116</sup> CIL, III, 6661:  
<sup>117</sup> Not. XXXII, 30:  
<sup>118</sup> Անդ, XXXIII, 28:  
<sup>119</sup> Անդ, XXXIV, 30. Եւսեր., Onomasticon, 'Alia' էջ 22:  
<sup>120</sup> Թերեւս՝ այս միջոցին մէջ՝ ժամանակ մ'եղած ըլլայ ի Փիլադելֆիա (Ամման.): Այս քաղաքին մէկ արձանագրութիւնը (Conder, Survey of Eastern Palestine, I, p. 54. Clermon-Ganneau, ի Rev. d'arch. or. II, 1899, p. 25) կը կարգայ սոյո 1. 2 եւն [ի] Եյ. ծեւնից Փո Գսոճիւրից (լեզ. Ժ Փր. Գորդիանու): Կարծեմ թէ ասաջին երկու տողերը կրնան ուղղուիլ լրացուելով. OPIA TΩ եւ NONA... EΓ կրնայ դիւրութեամբ լրացուելով ընթերցուիլ O(δ)ινα(ω)ια ηγ[η] [ι]όνα [ι]ης λ[ε]γ. ուստի «Վիկտոր ասաջնորդ Լեզ.»: Կարծեմ «ասաջնորդ» Գ. դարուն մէջ էրբեմն praefectus (legionis) իմաստն ունի՝ «Վերակացու լեզէոնի» կամ Լեզէոնապետ:

<sup>103</sup> CIL, III, 236: leg. I P(ontica).  
<sup>104</sup> Եղին երեւան կու գայ նաեւ նահանգներու անուանակոչութիւններէն: Դիոկղետիանոսէ յառաջ զմեզ չազգրողներն են Կապպադովկիա եւ Խորին Ասորիք (Syria Coele, Կեղեսուր). իբժէ ետքը՝ Հայաստան եւ Ասորիք ու Եփրատացւոց աշխարհ (Syria et Ephratensis):  
<sup>105</sup> Խոխոս ի «Hermes», XXXVI, 1901, p. 516—547) վերջը:  
<sup>106</sup> Not. Dign. Or. XXXVII, 21.  
<sup>107</sup> Անդ, XXXVII, 22. Բեթհորոյի (Beththoro) տեղն անձանօթ է. կ'ենթադրեն թէ ըլլայ Bet Erni ի Բատանէա (Benzinger, Baitarrhus եւ Bathyra, առ Պաւլի-Վ., յաւել՝ Շիւրէր, անդ, Ա., էջ 693, ծն. 132—133. Schumacher, Across the Jordan, p. 50 ff.):  
<sup>108</sup> Ար Թերեւս Մուսայաստանի մէջն էր. տես վերը՝ Բ. ա. 1:  
<sup>109</sup> Not. Dign. Or., XXXVI, 24. զժուարին է մեկնել իւր նոր յորձորնաբը Մոմսական (Nisibena). պատճառը կարելի է՝ թէ՛ անժամանակեաց բնակչութիւն մ'ի Մոմսէն, թէ՛ քաղցութիւնն զոր նոյն տեղը ցուցուց, եւ թէ՛ մանաւանդ որովհետեւ այն երկրէն զօրահաւար կ'ըլլար:

Իսկ Կապպադովկիոյ (որ այսուհետեւ Հայաստան եղած էր) երկու լեզէոններ կը մնան իրենց իւրաքանչիւր բանակավայրերուն մէջ, ի Մելիտենէ եւ Սատաղա<sup>121</sup>: Նորակազմը՝ Ա Պոնտական Տրապիզոնի, «ի Պոնտոս» (in Ponto)<sup>122</sup> կը գրաւէր Պոնտոս-Եւքսինոսէ առնուած պարենաւորմանց համարաբեր կարաւաններու գծին զուխը: Վերջապէս Իտալիոյ գաղտնիքը (praeses Isauriae) եղաւ զինուորական կոմս (comes rei militaris), եւ իւր տրամադրութեան ներքեւ ունէր Բ եւ Գ Իտալիան (II, III Isaura) լեզէոնները, որոնց բանակավայրերը չի նշանակեր «Տեղեկ. Աստիճ.»<sup>123</sup>:

Աճուսը շատ մեծ չէր ըլլար՝ եթէ այսչափով շատանար եւ ասով միայն չէին արգարանար ժամանակակից վիպյութիւնները՝ զոր քիչ մը յառաջ նշանակեցինք: Բայց զի տենք որ Կոստանդիանոս Դիոկղետիանոսի որոշմանց հակառակ քայլ առաւ. տարապայմանորէն աճեցուց այն զօրաբաժինները՝ որոնք սահմանուած էին ճակատամարտի սպասողները մատակարարելու, հետեւաբար նուազեցուց սահմանազրուիները կայարար նուազները<sup>124</sup>: Ասկից յառաջ եկաւ այն բաւական նորանշան տեսակը կեղծ-նազուստի (pseudocomitatenses, կիսակոմսական) լեզէոնները՝ ինչպէս կ'անուանէ զանոնք «Տեղեկ. Աստիճ.» որոնք յառաջ հսկողական զօրագնդեր էին, իսկ այժմ եղան պատերազմի պահեստագնդեր, որոնք այս ժամանակ տակաւին ձուլուած չէին բուն ռազմաժողով (comitatenses) զօրաց հետ՝ որոնք ի սկզբանէ վեր սահմանուած էին տարամերձօրէն միայն պատերազմական ծառայութեան համար: Ասոնց շատերուն անունները տահաւին կը ցուցնեն իրենց սկիզբը. եւ են՝ կաւին կը ցուցնեն իրենց սկիզբը (I, II sagittaria Armeniaca)<sup>125</sup>, Ա Իտալիան աղեղ-

նաւոր (I Isaura sagittaria)<sup>126</sup>, Զ Պարթեական<sup>127</sup>: Կային աւելի աննշաններ ալ՝ Ա Իտալական<sup>128</sup> եւ Գ Իտալական<sup>129</sup> (I, IV Italica).  
 Շատ նշանակալից կէտ մըն է որ հոսմէական այս ստորին ժամանակաշրջանին, — որ աւելի մեծ էր մանրամասն զանազանութեանց ու նախատեսութեանց՝ քան թէ զանոնք պայծառ ընելու արուեստը, — նոյն իսկ այն զօրաց մէջ՝ որոնք միշտ վերապահուած էին պատերազմական ծառայութեան (comitatenses, ռազմաժողովք, «կոմսականք»<sup>130</sup>), ոմանք կը ծառայէին միայն Արեւելքի մէջ, ուրիշները՝ միայն Արեւմուտք<sup>131</sup>: Առաջիններն են՝ Ա Փղաւեան Թեոդոսեան (I Flavia Theodosiana<sup>132</sup>) Բ Փելիքս Վալենտիս Թեբաւոց (II Felix Valentis Thebaeorum<sup>133</sup>), Բ Փղաւեան Կոստանդիան Թեբաւոց (II Flavia Constantin Thebaeorum)<sup>134</sup>, Ե Մակեդոնական<sup>135</sup>, Է Երկուորեակ կամ Կրկնաղեղնոց (VII Gemina)<sup>136</sup>, Ժ Երկուորեակ (X Gemina)<sup>137</sup> եւ Ա Փղաւեան Կոստանդիան<sup>138</sup>: Անձանօթ Արէսեան լեզէոնէ մը, կամ բաժան բաժան եղած Գ Արէսեան (IV Martia) լեզէոնէն են Երկուորեակ Արէսեան (Martinenses Seniores), որոնք Արեւելքի Զօրաց Մագիստրալնոսին տրամադրութեան ներքեւ էին (sub dispositione magistri militum per orientem), «Զօրավար Զօրաց Արեւելք»<sup>139</sup>:

<sup>126</sup> Անդ, է, 20, 50:  
<sup>127</sup> Անդ, է, 19, 55:  
<sup>128</sup> Անդ, է, 17, 53:  
<sup>129</sup> Անդ, է, 18, 54:  
<sup>130</sup> Հմմտ. Seeck, Comitatenses (առ Պաւլի-Վ.): Կը նշանակէ թէ pseudocomitatenses բացատրութիւնն ասաջին անդամ երեւան կու գայ 373 տարւոյ մէջ սահմանադրութեան մէջ (Կ. Թէոդ., Ը, 1, 10): Իսկ comitatenses ծագած ըլլալու են 297ին պարսկական պատերազմին: Սահմանազրուիներ սակար պահակագնդերը ի սկզբան պարտուեցան. եւ յաղթութիւնը ձեռք բերուեցաւ միայն երբ Գալերիոս խաղացուց պահեստի (երկրորդ գծի) զօրագնդերը (Աւրեղ. Վիկտոր, Վասն Կեսար. 39. Եւստրոպիոս, Թ. 24—25):  
<sup>131</sup> Ասոր մեծագէտ նպատակ ըլլալու է Պետութեան բաժանումը բազմաթիւ իշխաններու մէջ, թէպէտ եւ չթերացան նոյն իսկ Դիոկղետիոյ մէջ զօրահան ընել նորակոչներ Արեւելքի համար: Այլուստ խիստ խօսելով՝ այս ամէնը սկզբունքի կանոններ են, ո'չ թէ իրականութեան:  
<sup>132</sup> Not է, 12, 47:  
<sup>133</sup> Անդ, է, 11, 46:  
<sup>134</sup> Անդ, է, 10, 45:  
<sup>135</sup> Անդ, է, 4, 39:  
<sup>136</sup> Անդ, է, 6, 41:  
<sup>137</sup> Անդ, է, 7, 42:  
<sup>138</sup> Անդ, է, 9, 44:  
<sup>139</sup> Անդ, է, 5, 40:



